ԳՆԴԻԿ ԲՈՔՈՆԻԿ

891.99Մ
Գ-70

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ · 1937

Կար-չկար մի ծերուկ՝ իր պառավի հետ։ Խնդրում է ծերուկը՝
— Պառավ Ջան, թխիր մի գնդիկ-բոքոնիկ
— Ինչից թխեմ, ալյուր չկա։
— Եհ, պառավ Ջան, կոտը քերքրիր, մեղը ավլիր, գուցե մի քան հավաքես։

20 MAR 2013

Պառավը վերցրեց սագի թևիկը, քերքրեց կոտը, մեջը ավլեց ու հավաքեց մի յերկու բուռ ալյուր։

Թխեց պառավը գնդիկ-բոքոնիկն ու դրեց լուսամուտին, վոր սառի։

Գնդիկ-բոքոնիկը ծնց, ծնց և հանկարծ լուսամուտից գլորվեց նստարանին, նստարանից հատակին, հատակի վրայով դեպի դուռը, շեմքի վրայից ցատկեց նախասենյակ, նախասենյակից պատշգամբը, պատշգամբից բակը, բակից դուրս թռավ դարպասով ու գլորվեց ճանապարհով։

20 MAR 2012

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը ճանապարհով, հանկարծ առաջն է գալիս նապաստակը։

— Գնդիկ-բոքոնիկ, գնդիկ-բոքոնիկ, յես քեզ պիտի ուտեմ։

— Մի ուտիր ինձ, շղիկ նապաստակիկ։ Յես մի յերգ կասեմ քեզ համար,— ու յերգում է՝

«Գնդիկ-բոքոնիկն եմ յես, կոտիկից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած։ Յես պապիկից փախա, յես տատիկից փախա, իսկ քեզանից՝ նապաստակից փախչելն ինչ է վոր...»։

Յեվ նորից գլորվեց գնդիկ-բոքոնիկը, կորավ նապաստակի աչքից։

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, հանկարծ նրա առաջն է գալիս գայլը։

— Գնդիկ-բոքոնիկ, գնդիկ-բոքոնիկ, յես քեզ պիտի ուտեմ։

— Մի ուտիր ինձ, գորշիկ գայլիկ, յես մի յերգ կասեմ քեզ համար։

«Գնդիկ-բոքոնիկն եմ յես, կոտիկից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած։ Յես պապիկից փախա, յես տատիկից փախա, յես նապաստակից փախա, քեզանից՝ գորշ գայլից, փախչելն ինչ է վոր...»։

Յեվ նորից գլորվեց գնդիկ-բոքոնիկը, կորավ գորշ գայլի աչքից։

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, հանկարծ նրա առաջն է գալիս արջը։
— Գնդիկ-բոքոնիկ, գնդիկ-բոքոնիկ, ես քեզ պիտի ուտեմ։
— Եհ, թոփալ արջուկի շնորհքն ինչ է, վոր ինձ ուտի։
«Գնդիկ-բոքոնիկն եմ ես, կոտիկից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած։ Ցեռ պապիկից փախա, ես տատիկից փախա, ես նապաստակից փախա, ես գայլից փախա, քեզանից՝ թոփալ արջից փախչելն ինչ է վոր...»։
Ցեվ նորից գլորվեց գնդիկ-բոքոնիկը, կորավ արջի աչքից։

Գլորվում է գնդիկ-բոքոնիկը, հանկարծ առաջն է գալիս աղվեսը։
— Բարև, գնդիկ-բոքոնիկ, ես ինչ լավիկն ես։
Իսկ գնդիկ-բոքոնիկը յերգում է՝
«Գնդիկ-բոքոնիկն եմ ես, կոտիկից քերված, կողքերից ավլած, հում սերով հունցված, յուղով գնդված, լուսամուտին սառեցրած։ Ցեռ պապիկից փախա, ես տատիկից փախա, ես նապաստակից փախա, ես գայլից փախա, ես արջից փախա, իսկ քեզանից՝ աղվեսից փախչելն ինչ է վոր...»։

— Եղ ինչ լավ յերգ ե,— ասաց աղվեսը։ — Միայն թե, ափսոս, գնդիկ-բոքոնիկ, յես պառավել եմ, լավ չեմ լսում։ Ապա մի նստիր քթիս ու մեկ ել յերգիր, մի քիչ բարձր։

Գնդիկ-բոքոնիկը թռավ աղվեսի քթին ու յերգեց նույն յերգը։

— Շնորհակալ եմ, գնդիկ-բոքոնիկ, շատ լավ յերգ ե։ Յես մեկ ել կուզեյի լսել։ Ապա մի նստիր լեզվիս ու յերգիր վերջին անգամ,— ասաց աղվեսն ու հանեց լեզուն։

Գնդիկ-բոքոնիկը հիմարի պես թռավ նրա լեզվին, իսկ աղվեսը, հապ — ու կերավ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0395906

244

7929

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

Պաս. խմբագիր՝ Եդ. Զոփուրյան, տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան, սրբագրիչ՝ Ռ. Նշանյան

Գլավլիտի լիազոր. Կ—4512 հրաս. 3921, պատվեր 1298, տիրաժ 3000

Պետհրատի տպարան, Ցերեվան, II Կնունյաց փող. 4